

Հ Ա Ն Դ Է Ս Հ Ա Յ Ա Կ Ա Ն

ՄԵՍՐԱԳԵԱՆ ԴԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ

ինչ որ հնութիւնը պատմական յիշա-
տակներով հասուցեր է մեր ձեռքը, կըր-
նամբ ըսկել որ դոյլն ու նշխարեալ մասն է
մեր մատենագրական լեզուին. և մեծագոյն
և ինդիրները դորոք այսոր քննոտատական
արուեստ կրնայ առարկել մեղ անլուծա-
նելի թողած է իւրաքանչիւրոց գատաստա-
նին, մինչև բազում վիճմամրդ հաստատուի
օր մը: Առաջին ինդիրն զոր կընէ ո՞ր և իցէ քննադատ մը, այս է թէ արդեօր մես-
րովեան գիւտէն առաջ Հայր ինչ լեզուով
զրեն, ու ինչ տառիւք դրումէին թէ ու-
զենային բան մը 'ի հայ լեզու շարագրել. և
թէ Գանիելեան նշանագիրըն որչափ հնու-
թին կրնան ունենալ և թէ կրցեր մէկը
զանոնք 'ի գործ ածել յառա քան զիւտ
գրոյն, կամ մէնցու ու ինչպէս 'ի Միջակիոսմ'
Ասորուց քով թաղուած մնացեր է անծա-
նօթ 'ի Հայոց: Խնչպէս որ փարք 'ի շատէ
կրնամբ գուշակել 'ի Պատմութենէ Խորնոյ
ծերուեոյն, բաց 'ի աւանդութեամբ թերնէ
բերան անցնելով մնացած գողթնական եր-
գերէն՝ միս եղածներն յօսար լեզու զը-
րուած են, 'ի յոյն, յասորի, 'ի պարսիկ.
թերես քանի մը բան ալ հայ լեզուով ու օ-
տար նշանագրօք, բայց ցարու տնիլ մ'ալ
չերենալուն պատճառաւ՝ անորոշ է մեզի
համար այդ ինդիրն. սական չեմք պլ մոռ-
ցած նոյն Պատմակօր ըսածն թէ Հայոց ան-
ուսումնասիրութիւնն կերպով մ'ալ չար-
գարանար՝ վասն զի Պարսից ու Յունաց
տառերն ողջ կեցած են, ու կրնան 'ի պէտա
ծառայեցնել իրենց. որովք, կ'աւելցնէ,
«Ո, Ճմ՛զիւզից և գաւառաց, ևս և իւրաքան-
չիւր տանց առանձնականութեանց, և հա-
նուցը հակառակութեանց և գաչանց՝ այժմ
առ մեղ գտանին անրաք զրուցաց մա-
տեհամբ, մանաւանդ 'ի սենչական ազա-
տութեանն պայսազառութիւն»: Ոչ այս
միայն, այլ և նոյն անձն և ուրիշներն ալ
ստէս կը յիշեն թէ Հայք՝ Յունաց, Ասորուց

և Պարսից զրերն գործածէին երբեմն մին-
չե հայկական տառերն գտուեցան. բայց
կարծեմք որ մերոց զիր կոչելն պէտք է հաս-
կընամբ լեզու, բարբառ: Այս ալ չեմք կըր-
նար դիւրաւ հասկանալ թէ ինչպէս յունա-
կանոր մեր բարերն կրնայն հեգել, մինչ-
դեռ կարգ մը զիր կը պակիս 'ի նոսա, և
ոդք թերես մեծագոյն մասն բռնած են մեր
բարբառոյն մէջ, ասոնք են՝ Ժ, Ճ, Ճ, Ճ, Ճ,
Ճ, Ճ, Ճ. իսկ ընդհակառակն ասորին կրնայ
մեր ամենայն հնչմունքներն արտաքիրել:

իսկ գալով Ա. Գրոց, ասորին միայն կը
կարգացուէր յիշեղեցիս և ի պաշտամունա,
որոյ համար ալ բոլորէ և մերս Փարագե-
ցին Ղազար. Ասորի մեծաջան և անօգուտ
ուսմահերն աշխատեալք յոխորոտ. յորոց
բազմութիւնք. ժողովրդոց ունայնք և թա-
փուրք հրաժարեալք գնային յիշեղեցոյն:
Ուրիշ տեղ ալ յայտնի կ'ըսէ. «Պաշտօն ե-
կեղեցոյ և կարգացմոնք գրոց՝ ասորի
ուսմահեր վարէին 'ի վանորապս և յիշեղե-
ցիս Հայաստան ժողովրդոցս»:

Կ'թէ իրաւցընէ Հայք նախագոյն քան
զգիւտ գրոյն հայ լեզուով ու օտար նշա-
նագրօք կը գրէն, ուզեցին ցոյցընել ո-
մոնքն նաև յայժմուն նրագիր ու բնեռաքան-
դակս, կամ սոսկ կարծելով թէ ոմանք 'ի
նոցնէ հայ լեզուով գրած են: Մեղ ալ
ցանկալի էր այդպիսի զիւտից հանդի-
պիւ, բայց կարծեմք թէ ասոր գոյութիւնը
ցարդ տարակուսի տակ է: Չեմք ուրանար
որ այդ թեռափանդակ տառերուն ներքե-
գտնուին հայկական պատմութիւնք կամ
յիշատակք, անուանք թագաւորաց և տե-
ղեաց, ինչպէս 'ի թեռափանդակս Ասո-
րեստանեաց' Արդնոյ անուանի վիճակն
կցուած է Արքանա, և Արքեստառ ու Զա-
րէ անուանք ալ կը յիշուին նոյն արձանա-
զրութեան մէջ: իսկ զրամուց զալով յայտ-
նի է որ ցարդ գտնուածներն ոչ են այնչափ
հին որ մեր նիւթոյն կարենան նախատել,

սակայն անոնք ալ 'ի յոյն լեզու գրուած են։ Բայց զայս զիմելու արժանի համարիմք՝ որ մինչև ցլ. Անօրովով՝ Հայաստանն այց արքունեաց լեզու էր յունականն. սակայն մթին է մեզ խորենացոյն պատմածն, զոր ամբողջապէ մէջ կը բերեմք հօս. «Վասմէ հրամայեաց վասահապէց մեր թագուարին իշխանել 'ի Միջազգեաս, որ ի խաղաղութեալ կարգեսցէ զնոսու, և համար երկաքանչիրոցն հատցէ գործակալացն։ Եւ իշխալ նորա և կարգեալ զայր ամենայն, ոչ փոքր ինչ կրէ աշխատութիւն յաղագսքարտուղարի. զի մինչև գնաց Անօրուայ յարքունական դրանէն ոչ զոր 'ի ճարտարաց գտանէր անդ 'ի զպրաց, քանդի պարսկականացն վարելով. վասն որոյ մասուցեալ առ արքան քահանայի որումն Հարեւն անուն շնչեցեալ, խոստանաց հայկականաց լեզուաց առանձ նշանակիր, յարմարեալ 'ի Դանիէլէ եպիսկոպոսէ յիրմէ մերձաւորէ։ Հօն թէպէտ կը հասկանամք թէ 'ի Միջազգեաս արքունեաց լեզուն պարտկականն էր, բայց ինչ նշանակէ Հաբէլի պատմութիւնն ու ինչպէս կապի առաջնոյն հետ բայց թերեւս խորենացուոյն ստէպ ըստլին պարսիկ և յօն զիր, փոխանակ պարսկին յանցուի ասորականն, ինչպէս յետին պատմարանք մեր կ'ըսեն, ու անոնք չեն յիշեր զպարսկականն։

Ջիարդ և է, այսչափս ստուգիւ կրնամք ըսել թէ Հայք գործածեր են ասորի զիրն, երբ ուզեր են հայ լեզուով բան շարագրել, իսկ մէկալ մասերն ինչպէս որ ամուռծի մէկն այնպէս ընդունի, մենք չեմք կըրնար ասկէ հազոր չորս հարիւր տարուան առաջ եղած դէմքն յատկապէս տեսնելու բացատրել, մանաւանդ որ 'ի մատենապիրն իսկ տարածացնուիւն ու խառնակութիւն նշմարուի և մթութիւն։

Պակայն նթէ այս կէտն ալ զանց ընելով՝ անցնիմք բռն խսկ գրոց գիւտին, իօն ալ ոչ նուազ կրճիմներ կան, չեմք ըսեր անլուծանելիք, բայց և ոչ դիւրաւ գտատելիք. հօն տլ աւելի և պակաս պատմութիւնը և պարագայք կը տեսնուին: իսկ մենք լուսադոյն կ'ընտրեմք Կորեան գրչին ետևէն երթալ, որ կարծեմք քան զայլ ճնշտաբան է իւր նիւթոյն նկատմամբ, կորիւն յետ պատմելու իւր վարդապահութիւն։ Անօրովուայ նախընթաց սրբութեան վարքը, մասնաւոր իրեն կ'ընծայէ մեր գրերու գիւտին սրանչելի պատմութիւնն ամենայն մասամբ. ինչն է՝ որ շարժէ զիրաթուգիրուն և զթագաւուրն, կ'իթէ աշակերտաներովն և կողմանս Արամի 'ի քաղաքս երկուց Սսորւց, որոց առաջինն Եղեսիա կոչի, և երկրորդն Ամիդ անունն.

Հօն յիշեսիա՝ եպիսկոպոսն Բարիկաս, և Ալմիդ՝ Ակահիոսն, իրենց իշխաններով և կղերականներով ընդ առաջ կ'ելլեն այս պիսի նորանցն գալուստ մը պատուելու, Հօն շատ շուշանապով կ'անցնի 'ի Սամուստական քաղաքն, զոր այլք համարին զԱմուսն կղիս, և հօն կ'ըլլայ իր հրաշալի եսթիլրը, թողովմ մեր քարդան պարմէշին առանձին կարծիքն թէ զրոց գիւտն եղած ըլլայ 'ի լեռան հարլաւու Պատմիչը գրեթէ ամեննին կը տարածամինին գտուած զրոց թուոյն վրայ. կորիւն չի յիշասակեր թիւմը, նորենացին կը գնէ եօթն ծայնաւոր տառերն, բար ձեռագրաց ոմանց, որ հաւանական թոփի և միարան ըստ մասին կորիւն ըստաններուն և Ղազարյա և այցու խակ Վարդան պատմիչն մեր համարի թէ Ա. Անօրովով առ Դանիէլ եպիսկոպոսին գոտա ըլլայ քանն և երիտ զիր, ու տասն և չորս ալ տեսչեամբ յԱլբոտուծոյ ընդունած. բայց թէ որոնք են աստուածապարգերն և որոնք Դանիէլեանքն զայն չի նշանակեր ։ Այսշախս մենք յայսնապէս կ'ըսեմք վըստահացեալ 'ի խօսա պատմագրացն, թէ Դանիէլեանքն անպիտան չեղան ։ Անօրովիպայ, այլ մանաւանդ Սսորուծմ ընդունածներն Դանիէլեանց պակասութիւնը լեցուցին։ Անդ քեզի օրինակ ահա Ղազար արպակցին կ'ըսէ խօսելով Ա. Անջոտիպակցին կ'ըսէ խօսելով Ա. Անջոտոցին վրայ. «Զոր զարթոյց աստուածայինն չնորհ 'ի ցանկութիւնն յայս՝ կարգել զվազնջուցն գրեալ շարագիրս տառիցն, զորս ոչ ուրուք էր կոգացեալ արկանել 'ի կիր։ ուրեմն ինչն ։ Անօրովով կոգաց աստիճն պատմածնեց. մերոյ Ղազարոյ բանան ալ յետ զիւտին է, Դարձեալ կորիւն ալ թէպէտ ոչ յայսնի բառերով, սակայն մորով կը համաձայնի Անվիսի խորենացւոյն, և տես ըսածն. յետ պատմիլու տեսեան սրանչելիքն զոր ունեցաւ Անշոտոց, իշաւ, կ'ըսէ, Ամամուսացւոց քաղաքը. «Եւ անդէն 'ի նմին քաղաքի գրիչ ունին կ'ըսէ լանական գպրութեան Հռովիանու անուն գտնեալ. որով զամենայն ընարութիւնս նշանազրյուն, զիարեն և զերիայնն, զամանձինն և զիլինսուրն միանգամայն յօրինեալ և յանկուցեալ, 'ի թարգմանութիւն զանային հանգերձ արահերերկուք, աշակերտորն իւրովք։ Այդ եթէ քիչ մը հօն ոչ գնես՝ կը գտնես խորենացւոյն ըսածը. զիւտես՝ որ երկարութիւն և սղու-

1. Աւ-ը ձեւագիրմը Վարդանայ կ'ընծայէ այս չեակեալ. «Գրին որ յԱսուուծ էտո Անօրովից այս են. բ. գ. գ. լ. ծ. ձ. ա. շ. շ. զ. գ. ա. կամ ըստ այլ օրինակի բ. գ. ժ. ժ. կամ ծ. ձ. շ. շ. գ. զ. շ. ա. յ. ֆ.»:

թիւն կամ կարճութիւն ամանակաց ունին միայն ձայնաւոր սառպ, ինչպէս կը սորվեցնէ յոյն ու լատին լեզուն, նսկ միւս տառքն որ բաղաձայնք կոչուին միայն դըրութեամբ երկարութիւն և սղութիւն կու տան ձայնաւորաց և ոչ բնութեամբ, որպէս տաղաջապիք բացատրեն: Արին համարիք թէ Հռովմանոս կոչուածն առողանութեամբ կ'ազգէր Մերուվայ լսեկացը իւրաքանչիւր ձայնաւորաց զօրութիւնը, և ոյն ալ այնպէս կը կարգադրիէր: Այդնպէս փարպեցոյն տուու զօվսան զ]: Սահակայ նոյն բանին համար կարծեմք, իր կ'ըսէւ: Եթով առուց առլցեալ անցուցանէր վարժիք զրազում զիսնովք Յունաց, եղեալ կատարեալաւ սահակ հմուտ երգովական տափաց: Այս բանիս համապատասխանէ և պատրջաց ըսածն մէկ բերան, և Փօխսատրել զշայերէն աթութայն ըստ անսայթ արութեան սիւդորայից: Ի Հելլենացւոյն: Լասն զի Աթութայք և յոյն ձայնին Միւլորայց բնդարձակ սումամբ միայն տառ ու գիր իւնաւորմք քիչ շատ նոյն իմաստն կ'ելլէ: և թէպէտ ճշդի վանի կամ փաղառութիւն նշանակէ, սակայն վանկերն ալ ՚ի տառից և ՚ի նշանագրաց կազմին: որով ըսել կ'ուզէ զրիւն, թէ Ա. Սահակ և Մերուվայ տառերն կը ջանույին յունականաց համեմատ կարգադրել: ինչպէս նսե կ'ըսեն կարուրայրարին գրենոյն և ուղարձայնուրին հնկենային: ուստի յառաջ գայ ՚ի մեզ միայն լուսած տառագարձութեան կանոնն, որ կը կայսանաց իւրաքանչիւր տառին զիմաց հակառակազօր ուրիշ մը գնել փափուկներու տեղ թանձերն զնել, որ և ցայսօր գործածուի ոչ միայն ՚ի զիրս, այլ և բնական արտասանութեան մէջ: Վասն զի շատ գաւառք Հայսատանի հայկական տառից մեր փափուկ հընչ շածները թանձը ու ուժով կ'արտարերեն, իսկ թանձերը փափուկ: հետարբեն խուզարկու մը կրնայ յայսմ՝ մասնին մանր զննութիւններ նընել: Բայց թէ որ ճշդին նկատելու ըլլամբէ աստիճան մը միայն հայ ալիքարետն զուգաձայնի բնդ յաւնին, իսկ անկէ ետեւ չփոթի, և ձայնաւորաց կարգն ճշդ կ'երթայ ս, ե, է, (բ), ի, ո, չ, (ար կամ ով), ա, է, ո, ւ, (ա). (գուրս հանելով կիսամայնն): որուն մէջ թերեւ ժամանակաւ սրահան աչք մը տաղաջափութեամ թագուն կանոն մը նշանակէ:

Այս բազմաժան քրտամթէ իթազեալ մոխրոյն յարտացնելով ողջ որ կայտառ իւրան մը, հայկական լմուռն, կը մնար որ զանազան շարագրամք օտար ազգաց Յունաց և Ասորւոց ծանօթանան հայ ականչաց, իրենց բնիկ լեզուաւ թարգմանուեւ-

լով: Ասոր յարմարագոյն անձ մը միակ դատուցաւ: Ո: Ատհակ, որ իր մեծապատիւ պաշտամամբն ձեռք զարկաւ թարգմանելու ամենէն կարեռու մատեանն, որ ՚ի Հայատան պիտի գործածուէր յիկերեցիս և ՚ի վանորայս զԱւորը Գիրս, հանդերձ Մերուպատ, և իրենց հետ ուրիշը ալ, Յոհան Եկեղեցացին և Յովլէի Պաղնացի և Եզնիկ: որոց իւրաքանչիւր ընտրած մասն միգ մորթ կը մնայ, որովհետեւ պատմութիւնն կամ սանձնեական անձինը որ խոսնարկութեան չեն յիշատակած իրենց անուանքը, նմանելով բուն իսկ հեղինակաց Աստուածաշունչ մատենին: Դեռ չանցած ՚ի խորհրդածութիւն իւրաքանչիւրոց ունաց, կուգիմք յիշատակելնոյն ժամանակ, կամ քիչ վերջը եղած թարգմանութիւնքն որ ՚ի Յունաց և յԱսորեաց:

Եատ գրեանք ունիմք, որոց թարգմանիչը ե ժամանակի թարգմանութեան թէպէտ անձնութիւն էն, բայց գրութենէն կամ շարագրութեան ունէն կրնամք գուշակել թէ այն երանաշնորհ անձանց ժամանակակից գործեր են: Զեմք կարծեր թէ ինչ հեղինակաց անուանք որ մեր նախնիք յիշատակեն ՚ի զիրս իւրեանց, ամենքն ալ ՚ի հայ լեզու թարգմանուած ըլլան. վասն զի ահա յիշատակին Պղասոն, Արիստոսէ, Երուպոտոս, թուկիսիթէ և զեմուսթենէն: նմանապէս ՚ի քերթողաց հանդերձ տողերամ մէջ բերեն զնամերու, զթէտպնիս, զիշրիփիթէն և պայլ: կը գտնեն նաև տեղ տեղ Պիթեան պատգամաց տողերն ։ բայց, ինչպէս հա-

1 ՚ի հմգերորդ գարուն քան զամենքն հմառ թիւն գործածէ նիորենացին իր գրուածոց մէջ, ու կ'երեւ թէ շատ յօյն մատենացաց ան տեղեկութիւն ունի, որ երբեմ զնումք յիշատակէ, երբեմ զնուգոտու և երբեմ զներպիթէն իրենց պատմական կատրուանքներով: Նոյն իսկ իր Պատմագրութեան մէջ շատ նմանութիւն ունի Երուպոտամ մնջն: ՚ինքն անապարհաց երկարութիւնը չսփելով՝ կ'ըսէ ըստ ներու գուեաց բացարար մատարանութեանն: « Նորէօրէն քաշագաւուց առան ըշխապատեալ ժամանապարհաւ » ու այլ այսպիսիք, որով յիշրափ բաց ՚ի նախահայրութենէն հայկական պատմանեւանց այլ և ունակ կարուկ, հայատառախառ Երուպոտ կոչուս ՚ի մէջ Պատմանէն ալ մէջ բրեկելզ կ'ըսէ: ՚ինք արդ արդէք իցէ սիրելու այլ ոք ուն: Կարգացած է և զնիդիական: « Անգ էր տեսանել նոր զան Ոդիւնու զնելուապայ զնուկն ստատեանց այլ և ունակ կարուկ, հայատառախառ Երուպոտ կոչուս ՚ի մէջ Պատմանէն ալ մէջ բրեկելզ կ'ըսէ: ՚ինք արդ արդէք օրինակվմէ: « Արակւ Պատմագրէ զՄինոսուլուս », զըր հասականն քերգոզ, ՚նմանապէս Գիւգեաց և Կանատաւղեայ պատմութիւնը կառոր մը թարգմանեալ է յԵրուպոտամ, զըր մեր ձեռագիրըն կոչեն Կանատուղէս փօխանակ գրելու կանտաւղէս: Նոյն

ւոնական կարծելք, մեր լեզուին նախահարբերն Ս. Սահակ և Ս. Մեսրովաց աւելի փոյթ ցուցեր են եկեղեցական գրեանց թարգմանուելուն, և ոչ միայն Ս. Գիրքն, այլ և ըստ կորեան «շատ և մեկնութիւն գրոց թարգմանէին», որով կրկին և կրկին յերիւրելով յզկեցին հսկական աննամանելի թարգմանութիւնն Ս. Գրոց: Խակ այլք ըստ իրենց առանձին ինչ ճաշակաց թարգմաներ են ինչ որ պատշաճ դատեր են մեր ազգին:

Խորենացին իրեն Պատմութեան մէջ բաց ՚ի բազում պատմագրաց յիշէ և զԱվիրիկանոս, զՑովսեպոս, զՀետպողիսոս և Պայյոս, բայց շըսեր յայտնապէս՝ թէ թարգմանուեցան: Խակ թարգմանուածներէն կը յիշէ զԵկեղեցական պատմութիւնն Եւսերիսովի. «Վկայ քեզ ՚ի մօսոց երաշխաւորեսէց Եկեղեւիսաստէ զիրք Եւսերի կհսարցուոյ, որոս ետ թարգմանել երանելի վարդապէտն Մաշտոց՝ ՚ի հայ լեզուո: Հիմա ալ ունիմք զայս թարգմանութիւնս, բայց օրինակողաց տղիսոտթինը թուլչի տար ու մանց կարծելու թէ այնչափ հնութիւն ունենաց. և ինչպէս կերենի խորենացւոյն ըսածէն ասորերէնէն թարգմանած են նախնիք, թէպէտ յայտնի հելլենաբանութիւնք ալ երեան մէջը: Խակ խորենացւոյն յիշածն կրնաս գոնել և յայժմուս, միխոն ուր Պատմահայրն ասգներութիւն ասային, երեսաւաներութ րիս կ'ըսէտ, փոխսնակ անոր մերս՝ կարուրութիւն ասային, զրոխ մժի՞ն մանապէս Սբգարու առ Քրիստոս Քրիշն մեր գրած թուղթն և ընդունած պատմախանն կը գտնես նոյն բառերով յլշւերի և ՚ի խորենացին, և ճիշդ նոյն չափով: Որով կարծեմք թէ բաց ՚ի ժամանակաւ եղած աղաւաղոթիւնն է ու զրչաց անփութութիւնէ: Կրնամէր խորենացւոյն յիշածն թարգմանութիւնն համարիլ, որը հաստատէ և ոճոյն շարագրութեան մաքրութիւնն ու յատակութիւնն: Դարձեալ ուրիշ վկայութիւն մ'ալ համաձայն կը գտնեմք երկու վերյիշեալ պատմշչացու՝ ՚ի հաստատութիւն մեր փաստին, այս է Տիրեր կայսեր թղթոյն մէջ հոռովմէական օրինաց յիշատակութիւնն կ'ըրբ:

Դիրքն բերէ և զՄեղիայ ու զՊելիասայ անցքն՝ յՆերիփեալ ողբերգութենեն, զոր և յմասաւուեն Յուշան Յմնեցին իր Ալունաբանութեան մէջ կը յիշ:

Դեռ անթիւ յայսպիսի օրինակներ կրնայինք մէջ բերէ ՚ի նախնեաց, բայց այս դրութեան համար բաւական է այլաշափս, ցուցընելու որ մեր նախնիք աւ օրիներ են քերգողական պէրճ օրինակներ դործածել, և զանոնք հայ ականջաց ծանօթաց ընել:

կրկին անդամ. ըստ Խորենացւոյն կ'ընթեռ նումք. «Քանզի սովորութիւն է Հռովմայեցոց» աստուած ՚ի հրամանէ թագաւորի միայնոյ ոչ նստուցանել, մինչև ոչ փորձեալ քննեսցի նա ՚ի սինկղիտոսէն ։ Նոյն բանը կը կրկնի ՚ի պատմախանի նոյն թըդթոյն. «Քանզի առ գոսա՝ ՚ի քննութիւննէ մարդկան տուեալ լինի աստուածութիւնն: Եւ արդ սյունէետև եթէ ոչ լինիցի հաճոյ աստուածն մարդոյն, աստուած լինել նա ոչ կարէ. և իբրև յայսմանէն մարդոյն արաւոն է քաւել զաստուածն: Այս խօսքն է բուն Տերաւողիանոսին, որ, ըստ Եւսեբեայ. «Ալպսսպուտ տեղեակ էր օրինացն Հռոմոց, որ և այլովք իրօք սրանչելի էր. և ՚ի նշանաւոր ՚ի սրանչելի մարդկանէ անսմին որ էին ՚ի Հռոմ քաղաքին էր նա. զՊատմախանին (Apologie) զոր արար նա փոխանակ քրիստոնէից հռոմարէն, և մեկնեցաց յունարէն, եղ նա ՚ի բանին իր. ՚ի պատմելն իրուրմայսպէս. Այդէ մեք առաքեսցորդ, ասէ, և ՚ի բնութենէ վասն այս օրինաց¹. գրինս հինս ունիք գուրք իթէ աստուած ՚ի հրամանէ թագաւորի միայնոյ մի հաստատեսցի, մինչև փորձեալ քննեսցի նա ՚ի սինկղիտոսէ. Մարկոս Սմելզս այսպէս արար վասն պատկերի միոյ զԲարոնու². այս փոխանակ ընդ մեր նկել³, (Եւս. Ա. Բ. Բ.) զի առ ձեզ ՚ի քննութենէ մարդկան տուեալ լինի աստուածութիւնն: և արդ այսուհետեւ թէ ոչ լինի հանց աստուածն մարդոյ, աստուած լինել նա ոչ կարէ. և իբրև յայսմանէ մարդոյն արժան է քաւել զաստուածն: Այս Նցքիտա Եւսեբեայ խօսքն է յեկեղեցական պատմաւթեան ըստ նախնեաց թարգմանութեան, և հարկ է խօստպանիլ որ խորենացին այլ ասէկ հանած է իր պատմութիւնն, և ոչ ՚ի Տերաւողիանոսէ՝ թէ և յունարէն թարգմանուած առ ըլլար:

Խորենացին յիշէ նաև ուրիշ գրուած մ'ալ, և է այդ Սբգարու ու Թագէսոսի Առաքելոց վրայ, յորում պատմին. «Քարտսա առարելոցն ՚ի Հայոս և հաւատատլ Աննարարկոյ և թողով գհաւատոն յերկիւզէ նախարարացն Հայոց, և կատարումն առաքելոյն և որք ընդ նման՝ ՚ի գաւառին Շաւարշան որ այժմ՝ կոչի Արտազ, և պատմումն քարին և յիրար գալ և ընդունել դմարմին Արտաքելոյն, և առնուլ անտի աշակերտացն և թալել՝ ՚ի գաշտոն», և այլ յա-

1 «Զի զծագմանէ այս օրինաց խօսեսցուք»:

2 «Մարկոս Եմիլիոս այսպէս արար վասն պատկերի միոյ կոսոց Ալբուսանեայ»:

3 Facit et hoc ad causam nostram, ըստ Տերաւողիանու, «և այս ևս մեզ ՚ի նպաստ է»:

բակից պատմութիւններ։ Այս դրութիւնն ալ թուի նոյն ժամանակներն թարգմանուած, որ այսօր տպագրած եմք 'ի կարգս Սովերաց, « Վկայաբանութիւնն թաղէոսի Արաբելյն քարոզութեանն և գարստեանն 'ի Հայոս և կատարմանն որ 'ի Գրիստոս ։ Այս թարգմանութեան յիշտակարանն ալ այսպէս խօսի. « Ես Սամուէլ եպիսկոպոս անարժան ծառայ Քրիստոսի, թարգմաննեցի զվայութիւն սուրբ առաքելոյն Թագէոսի, և զարրոյ կուսին Սանդըխտոյ, և եռու ամենայն Հայաստան աշխարհի ։ Ոմանք համարեցան թէ յիշտակարանիս Սամուէլ կոչածն ըլլայ Շմուէլն եպիսկոպոսի հակոսակաթոռ սուրբ Սահակայ. իսկ թարգմանութիւնն եղած է յասորոցն, Բաց ասոնցմէ Լարուբնեայ ասորուոյ գրոց թարգմանութիւնն ալ լեզուաւըն ու յատակութեամբ նախագոյն կ'երեկի քան զիսրենացին, որ կը յիշէ նաև « զիւղիւալ քորմ Հանւոյ, գրող մեհենական պատմութեանց», և զիսրդածան եղ եսացի Անտոնիոսի ժամանակ, որ առաջ Վաղինաթինեան էր ու ետքը իր աղանդապետը թողով իրմէ նոր աղանդ հնարեց. որուն համար կ'ըսէ մեր կրոպոտն. « Եր այր կորովի բանիւք, որ ե առ Անտոնիոսի համարձակեցաւ զբեկ թուղթ, և բազում ասացուած արար ընդգէմ աղանդոյն Մարիիոնացոց, և բաշխից և կուոց պաշտաման, զոր 'ի մերում՝ աշխարհիս ։ այս յիշեալ գրուածներն կը գտաւին այսօր ալ յասորի և 'ի յոյն լեզու, բայց հայ լեզուաւ գեռտեղ մը չգտուեցաւ։

Ասոնց թարգմանութեանց գիւտն որչափ ալ ցանկալի է իրեն պատմական յիշաւակաց աւանդապահ, սակայն այնշափ անցուսապի կ'երեկն, տեղ մ'ալ ասոնց նշմարանքը չգտնուելուն պատճառաւ։ Հաւանական ալ է որ գեռ շատ մատեանք ալ աստրական լեզուէ 'ի մերս թարգմանուած են յերանաշնորհ ու յանխոնջնախնեացն մերոց, բայց ժամանակաց ու գարուց կամ մարդկային անգութ խժդժութեան արգասիքն եղեր է՝ որ այսօր զրկուած եմք 'ի նոցանէ։ Մերայոց փառքն ու զուարճութիւնն աւելի 'ի թարգմանութիւնն երեցած է քան յինքնագրութիւնո. ու ամբողջական իսկ մատենագրութիւնն մերուրի մասամբ ճնխ չեղած քատամարտագրաց որոց արդիքան կ'աւանդեն նոյն պատմութիւնն երեն այլ և այլ շարագրութեամբ. դաս մ'ալ ճառական գրուածոց ու վարդապետութեանց՝ որ գրեթէ նմանութեամբ այլոց օտար Հարց սրբոց շարադրեալ են, բաց

յոմանց, ինչպէս իմաստասէրն Յոհան Յանցին, Հնորհատին ու Լամբրոնացին, որք իրենց սեփական ոգւով ու մորով խօսին. իսկ յետ Ժերորդ ու Ժիլ գարերուն կը սկըսին ուամկամաւոն երգերն ու տաղաջախութիւններն որով կը կազմի խիսկամն ու գին աղդային. որք և մինչեւ ցայսօր շարունակուին աւելի ու նուազ յաջողութեամբ ըստ հանճարոյ և ըստ զգացմանց։

Ցարդ ըսած թարգմանութիւններն կէս կորուսեալ ու կէս անծանօթ, աւելի ըստ հանույի իւրաքանչիւրոց թարգմանուած են զանազան ժամանակ, բայց նոյն մեսրոպեան պարագային մէջ, իսկ մեծագոյն հեղինակութիւններն կ'երեկն մէկ կեդրոնէ շարժեալ, զանազան գրչովք 'ի զանազան աշխարհու գործուած. Այս ընթացքը թարգմանիչը կամ մատենացիրբ ցըսւածներն ոչ միշտ իրենց անուանքը կը ստորագրեն իւրենց գործոցը մէջ, այլ շատերն անանուն են, ոմանք միտոյն այլ 'ի մասն ճառած կամ թարգմանչի մ' անուն նշանակեն, կամ սոսկ քաղաքն կամ թուականն, կամ միայն թէ ովզ յորդերեց զիրենք յայդ գործ. Մենք ալ նոյնպէս սակաւութ նշանակեմք իսկ ու կը գտնեմք 'ի ձեռագիրս և 'ի յիշաւակարան։ *

Գրեթէ ամենայն վմնորյայք սեփական պաշտօն մ'ունէին զգեռապիրս օրինակելու և աւանդելու յիտոնց. ոմանք ևս աւելի գիտնակալը իրենց ախորժած մասերն հաւաքելով 'ի մի զիր՝ կը ձեւացընէին ձառնաթիրս, որոնք ցայսօր կ'իմացընէն մեզ թէ ատենօր այն ճառերն ամբողջապէս գոյին թարգմանած, ու ժամանակաւ կորսուելով մասեր են հաւաքրման նինին իւրաքանչիւրութիւններն միայն Ասիմի սոսկ կարծիք մը չէ, այլ և անթիւ օրինակներով զնոյն կրնամբ հաստատել, ոչ միջակ գրենոց միայն, այլ նաև երեկելի սուրբ հարց. որոց շատ ճառերն հատուկը սուրբ միայն հասած են ձեռքերնիս. Ակըսեալ նոյն իսկ Ա. Յոհան Ռիկեներանի երկասիրութիւններէն, զիտէ աշխարհս մեր մատթէուսեան և պաւղուսեան մեկնութեանց հրաշալի թարգմանութիւնն, թէպէտ ոչ ամենքն հաւասար գրը չէ եղած, այլ անտարակոյս 'ի նախնեաց թարգմանուած են, և ոչ հասած մինչեւ մեր օրենք, գոնէ ամբողջապէս Նոյն իսկ նախնիքն մեր ըրած են այնպիսի ընտութիւնն ինչ որ մարդկային միտքն աւելի կ'ախորժի, ընտիր գրուածները երեկելի ու ճարտար գրչաց ձեռքն աւանդել, և բոլորովին ստորինները՝ ոչ այնչափ թարգմանուելու արժանի համարել. Բայց յետինք ժամանակաւ գարձեալ 'ի նախնեաց կար-

գեն ջանացած են նաև մանր ու ստորին՝ ներն ալ թարգմանել, թէ ոչ անձամբ գտնէ ստարովք և վասն զի կը հանդիպիմք 'ի նախանիս մեր, գոնէ յետ հինգերորդ գարու՝ որ շատր ոչինչ հմուտ ու ներկուռք յան և ասորի լեղուաց, բնիկ ազդայնոյ մը թարգմանել կու տային, ու իրենք անոնց շարագրածն կոկելու յդիկելու կ'աշխատէին:

Որչափ աւելի փափաքանօք կ'ընթեռնումք հմուտ գրի մ'երկասիրութիւնը, սյնչափ սիրով ետեւ կ'ըլլամբ այն անձնն անունն ու վարըք զիտնալու. սակայն ամենէն երեկի թարգմանիչք ծածկեր են իրենց անուանն, Ասկերերանի, Բարսզի և Եւսեբեայ Քրոնիկոնին ու Սիրերիանու ճառարուն: Այս չորսն կրնամք ըսել որ յետ Ա. Գրոց առաջին տեղին բռնած են 'ի թարգմանութիւնն հայկական դպրութեան, իրենց յատակ լեղուաւն. միայն ար է մեղադրելին որ Քրոնիկոնին թարգմանն երբեմն գեղեցիկ կերպով հայենաբանէ, իսկ Բարսզի Վեցօրէից թարգմանիչն հաւատարիմ չէ իւր հեղինակին: Այս երկասիրութեանց հնութեանը բաց իշարգրութեան ընտրութենին ուրիշ բացցայստ վկայութիւն չեմք գտած 'ի զիրս նախնեաց: Ցացտնի է ամենուն Եւսեբեայ ժամանակագրութիւնն, երկու մասն, յորոց մին աւելի ժամանակագրական ցանկ միայն կը պարունակէ, և միւսն պատմական դէպս. նմանապէս Սիրերիանու հնդետասանն ճառերն ողորկ հայկաբանութեամբ յերիքեալ: Իսկ Մեծին Յովհաննու Ասկերերանի ճառերուն օրինակող մը 'ի Ժ. Պարու Սիմէոն անուամբ, կը կիայէ Հանդերձ տեղական յորիջրջմարին որ հնագոյն օրինակի մը գտեր է այն սորոց վարդապատին Պալազով չորերտասան թղթից մեկնութեանն, նմանապէս Ա. սորուցն իշիքեմոյ նոյն գործին, ու 'ի մի գիրս օրինակեր է. « Ուստի (ի Հայոց) և և եմ Այս կիմեւովն նուասու և անախտան և կրօնաւոր, որ Ընթերցասէր և ցանկացող և եղաոլ 'ի մանկութենէ իմմէ՛ յուղէի խըն՝ գրէի զգիրս Տեառն Եփեմի զշին կտաւ և կարանաց թարգմանութիւն եզնոր: Զոր և գնացի յաշխարհն ուստի և սուրբ առաքեալն Բարթովիմէոսն կատարեցաւ 'ի տեղւոյն, որ թթուակալութիւն Արծուանակ տան կոչու, Եղինի անոն եւ ուղարցուն և գտի զմեկնութիւն երանելի աւաքերոյն և Տեառն Եփեմի Խորին Ասորւց, և գրեցի 'ի սոսոյդ և 'ի հին օրինակէ, զոր և բերի. և այսու միայնոյ ոչ հաւանեալ, և այլ և յայլ տեղ գտի զերանելցյն Տեառն և Յոհաննու Ասկերերանի կարճառու մեկ՝ նութիւն Ճ. Պղթոյն Պաւզոսի, և 'ի մին

« զիրս գրեցի. նորի առաջին զջեառն կը գրեմի և ապա զջեառն Յովհաննու: Որ « և անբաւ և մեծ զիտութիւն յինքեան րու « վոնդակեալ ունի. և զիրցաւ զիրքս « Տեառն Եփեմի որպէս յառաջն ասացի՛ « յԱ. զրագ գաւառոփ 'ի տանն Արծուանեաց. « և զերկորդ զիրքս 'ի Կոգովիթ գտաւ « որ 'ի տանն Բագրատունեաց հպիսկոպո « սարանի, ի Տեառն Թագէոսի ժամանակի « Տեառն Մուչի Եզրորդւոյ, որ զառա « քելյու թագէոսի ունէր զլարս և զսըր « բութիւն »:

Զիմիք ուզէր կիմա հօս շարել զանազան կարծիքները զոր ունեցէր են ումանք այս գրոց թարգմանչաց ով ըլլալուն փոյց: Այլ փութամք քանի մը զիտողութիւններ ընել այս թարգմանութեանց վրայ, ոչ պարսաւական՝ զոր և ոչ կարող եմք ընելու, այլ միայն ինչ որ իրենք իրեւ առաջին հարք լեզուին պատշաճ դատեր են իրենց մտացնաց:

Թարգմանութիւն մ'ընտիր ըսուելու համար նախ պիտի ըլլայ հաւատարիմ այն յեղուին ու բնադրին ուսկից կը թարգմանէ. Երկրորդ յինչ լեզու որ թարգմանէ այն լեզուին ամեն գեղեցկութիւններն պիտի ունենայ: Կրնայ սիալ մը կամ սիալներ սպրոդած ըլլան կամ բնագրին վրիպակ ընթերցմանէ կամ թարգմանչին անուշադրութենէ. ուրիշ բան է թէ որ օրինակուզաց անփութութիւնն ըլլայ, անոր համար շատ զգուշանալիք է մանաւանդ մեր ձեռագրաց մէջ, յորում գրողն թոյլ կու տար օրինակուզաց աւելցընելու կամ պակսեցընելու, և երբին տգէս գրչաց ձեռք կը արուէր, անոր համար, կ'ըսեմք, պէտք չէ յախուն գատաստան ընել ու գատափեատել զիտարգմանիչն թէ տգէս է կամ անհըմուտ: Այս ալ առանց զիտողալթեան շանցընեմք որ մեր ձեռագիրք ոչ իրեւ զիունաց և զլատինացւոց և ոչ իրեւ զլատուց հնագոյնք են ժամանակաւ, այլ ամենէն հինն իններորդ ու տասներորդէն վեր չելլար. ասոր համար ալ շատ վլտահանալիք չեն զրչութիւնքն:

Բայց երբ թարգմանութիւն մը յիւր լեզուի ընտիր է ու հեղինակին անհամաձայն, այս ալ ունի իւր ընտրութիւնը նկատմամբ իր լեզուին և ոչ մազգիրն: ասոր միակ օրինակ ըլլայ Վեցօրեայն Բարսզի, որուն փոյց ուրիշ անգամ խօսուած է: Հարի չէ որ լինագրին լեզուին ամեն դարձուածներուն, այլաբանութիւններուն ու ուրիշ մասն մասանց հաւատակի գրին, այլ կարող է միշտ գեղեցիկ ընդ գեղեցկի փոփոխել, կամ գեղեցկի ընդ ոչ գեղեցկի՛ որ ա-

ւելի ճարտարագոյնն է։ Կ'ըսուի սովորաբար թէ թարդմանին չիկրնար երրեք հաւասարի իւր ընազդին։ բայց աղէկ դիտէ որ լեզուի նկատմամբ է խօսքերնիս։ իրաւ է խօսքը, երբոր այսօր ուզենամք երևելի հեղինակի մը գործը թարգմանել որ քան զմեզ յասպահ ապահ է իրեն փայլած մատենագրութեան ժամանակ, ու մենք այսօր մեր մատենագրութեան գեղեցիութիւնը կորուսեր եմք, բայց ժամանակը փափոխենք, բնագրիս հեղինակը անկած դարրու մատենագրի է, ու մենք այսօր մեր ոսկեղին գարուն գրիշն ունենամք հաւասարազօր մեր նախնեաց, կարծիմք ոչ որ կը հակառակի թէ այն ատեն թարգմանյն լեզուն գերազանցէ քան զրբնագիրն, բայց միշտ նկատեալ այս գերազանցութիւնի բարձր լիզուոց իրենց սուհմունն մէջ։ Ալենքն գիտեն որ Ա. Չուսննու Ռսկիերանի ժամանակ յաւնական լեզուն ընէր այն պայծառութիւնն ինչ որ Հեթանոսական ժամանակն ունէր, իսկ Հայ Թարգմանին իրեն լեզուին ծայրագոյն գեղեցիութեան ժամանակ կ'ապրէր։ արդ մի տարակուսիր որ բնագիրը խոնարհագոյնն է յայսմ քան զթարգմանն իւր, բայց թէ որ չհաւանակ ըսածին, բաղդատէ իւրաքանչիւր, բացատրութիւնները երկու լեզուաց մէջ ալ, կը տեսնեն որ ստէկ թարգմանին կը սանձէ հեղինակին առատաբառութիւնը, և ինքը կատարիւալապէս տիրած է իր լեզուին։ թէպէտ շատ անգամ առաւելաբանէ ինքն ալ նկատմանը բնագրին։

Գալով սխալներուն որ թէպէտ հայկարանութեան չին վեսեր, բայց պակասութիւն մի է թարգմանյն, զանազան աեսակի կրնան ըլլայ, որոնք բուն թարգմանյն վերաբերին։ մէկ մը իմաստ իմաստի հետ խառնել, մէկ մ'ալ բառ մը միտուլ կարգալ կամ յօդք բառին հետ շփոթել, որ այդ ալ ստէկ հանդիպած է։

Երկու տեսակաց ալ պատճառն յայտնի է. վասն զի, ինչպէս գիտեն հնախօսը, ձեռագրաց մէջ ոչ կէտաղրութիւն կայ, ոչ շշտ, և առ հին թյուն և ոչ հատագըն՝ որով յօդք կարենացին որոշել. անկէ ծագած են այս շփոթութիւններն։ կարծեմք աւելորդ է նշանակի հօս այս շփոթութիւնները, որո՞ն մատիր բազգատառը մը կրնայ տեսնել դիւրաւ։

Հինգերորդ գարու ոճը թէպէտ միշտ ընտրութեան գեղեցիի աղիքիւն է, սակայն իւրաքանչիւր գրիշ նոր ձեւ ու նոր շիդ ագուցած է իր գրութեանը։ կըր մէկն ստրզ ու յատակ կ'ընթանայ, միւսն կը սիրէ փառաւոր ու պղատոնական շարագրութեամբ ընթանալ. ուրիշ մը հելլենաբանութեան

առերեւոյթ կերպարանքն առած կ'երևայ, միշտ անդէմ ժամանակներով պարբերութիւնները կնքելով Ոչ որ կրնայ մեղադրել ինսաւ իմաստ մը կամ բառ, սակայն կըրնայ խորհրդածուիլ թէ արգեօթ իրենց ամեն գործածան մենք ալ կրնանք այսօր գործածել։ այս կարծիքն ունանց ընդունելի է, բայց այլք կը ժաման։ Օրինակաւ մը բացատրեմք բասանիս. շատ թարգմանիչից փոխանակ մէկ բառով բացատրելու ուսումնակ ինչպէս երկրաշափութիւն ըսելու սահմանաց և բաժենից պայմանէ կ'ըսեն, ասուղարմութիւն ըսելու աեղանքութիւն, ասաղարման կամ այլ իշմակ և ասուղարման կամ այլ աշխատանքութիւն, ու գայան աստեղացն կմարտէ և զանակն իստարակ. — փոխանակ անդամահատութիւն (առաօտոմա) ըսելու կ'ըսեն հաեգամանէր հերձոյ զմարմին։ — բուսաբանութեան ճիւղերն բացատրելով գեղեցիկ կերպով Ա. Բարսդի Վեցորդէից թարգմանին կ'սուէ, ձարտարուրին արմասագծու և փորձ իմաստնոց խոռաքիմէ (Յօնապակ)։ այն սերբանաբարդ կոչուած թաւուններուն կ'ըսէ, որ ի՛ կոյս սերբանեան դարմանին. — ասանց նման գեռ անթիւ զուրցուածքներ, զորս աւելորդ համարիմը հօս յիշատակել։

Գիշշատ օրինակներն կը ցուցընեն որ ընտիր ասացուածք են, բայց ոչ ամենքն գործածելիք, ինչպէս ողջախոն գատաստանն կ'իմացնէ։ Ուրիշ կերպ մ'ալ ունին ումանիք, որ նյոյ բառը կրնեն թէ յատականին ալ նոյն բառն գնելով ինչպէս կարէ ձմերոյնի, մեծագոր զօրարիւն, ծեկակաս կապովք, սառնասաւոյց ստանամանիք, և այլք բիւրապա-

1 Ալիւլ կարդացմամբ գրիպակէ խօստ շատ կը դանեմք առ նախնին, և ինձ կ'երևի որ ասոր մէկ պատճառ ալ այս է որ շատապով ու առանց շարագրութեան աւշ գնել աեղ յայտականէ անուշագրութեան կերպայ, բար գրութիւնն մէկ կերպով միայն կրնայ մեխուլու ու չէ երկիրիմ։ Նւակիսուի թարգմանին երբեմն յատուկ անուանըց թարգմանած է։ Մէծացք (Մէգասմէնէս), Պատուտին (Տիմաւու), յայտնի սխալզով Ռուկերերան թարգմանն գրած է Դիմունշտայ, յոյնին ձև շաղկապը որ նշանակէ և տառապարմանթեամբ Դիմունշտայ կը նառնելով բառ ոին հետ, Սինդունայ կամ շԱնտարանի։ Այսպէս կրնայ համարուել և Յաղետոսէ անունն, յօյն ձձ որ ի՛ զարդ շատ անգամ կը դրուի բառից ետև բառներով ընդ անուան։

2 Ա. Բարսդի, Վեցորդ, էջ 188. ուր հայ օրինակներն կ'ընթեռնուն Խորանին նման ապագրածին ի՛ 1830, բայց յօյն բնագրին բաղդատութեամբ Դիմունշտայ ընտրելադոյն ես և կարդալ Խորանին։

տիկեր, որուն յայտնի խորթութիւն մը կ'երեկի ի վեցօրեայն Հայոցն ուր կ'ըսէ. « Զի մի վասակացին ՚ի վասակարութենէ վասակար արմատոցն ». բայց կրնայ վայելչարար գործածութէլ կրախակորոյս կրախաւեաց, բարձրաբերձ բարձուեք, երկայնակից երկար (այսինքն հասակ), և այլ ասոր նմաններն, զոր կրնաս ժողովէլ ընթերցմամբ:

Բայց յընտիր թարգմանութիւնս ուրիշ խնդիր մ'ալ առջևնիք կ'ելլէ, այն է թէ արդեօք փոխարեական բառերն կրնան ճիշդ ըստ բառին թարգմանութեն ոչ ըստիմաստից, ասոր օրինակ ալ 'ի նախնաց կրնամբ բերել թէպէտ ոչ յընտիրելազունից. զոր օրինակ դժենայ ձարտասակ փոխանակ քաջ ըսելու ու պերճախօս. այս աւելի զգալի կ'ըլլայ ՚ի քերդողական բառս մանաւանդ Հոմերի, ուր գրիթէ ամենայն բառը փոխարեական իմաստով գործածուած են: Ինչ որ բառ կամ առղեր մեղի աւանդած են նախնիք ՚ի Հոմերոնէ կամ յալլ քերթողաց անոնց մէջ երկուքն աւելի նշանաւոր են մակրաց նկատմամբ: Յաէլլ Անշաղթ Սահմանաց գրբն մէջ կը թարգմանէ Հոմերոսի մակդիրն զոր ինքն կու տայ Պելլոն անուամբ տեղւոյն, ու կ'ըսէ տերիաշարժն Բիդովն, որ նշանակէ մացառախիս. ուրիշ տեղ ՚ի թէոդնեայ օրինակ բերելով կ'ըսէ. « Պարտ է յաղրատուրելէ փախէլ և ՚ի մեծակիրեղն անկանել ծով »: Մեծակիրեղն ըստ նիւթական թարգմանութեան նշանակէ մեծ կէտրու ունեցող ծով, բայց բուն իմաստն է մեծ ընդունարան ունեցող, ընդարձակ ծով. այս ածականի գործածած է նաև Հոմերոս յըղիսականին մորով: Այսպէս է և յիշականի Հոմերի այն տողն:

« Եւ զիսա մեծամեծար պատուեաց րիկամբըն յաւերժիք »: այս ինքն տապով բաժին իսասայ արշատոյն լայն կոնակն: Բայց այս միշտ զգուշալի է, վասն զի կամաց կամաց ՚ի հելենարանութիւն կը մօտենայ, ու մեզ անհասկանալի կ'ըլլայ: — Իսկ մեր մէջ քերդողական ազատութեամբ նշանաւոր է մեր Նարեկացի, որ յորտառատ գալախաներովն գեղեցիկ մակդիրներ կը կարգէ նման հելլէն քերդողաց իր գործ մէջ. յորում շատ բացատրութեանց լրց կրնաս առնուլ. վասն զի անոնք յունարանութիւնը չեն, այլ գեղեցկարանութիւնը, որ ամեն լեզուի մէջ կրնան գտնուիլ, կամ 'ի հանճարաց ստեղծուիլ Այսիսի է այն այլաբանութիւնն անդաստանի ու արգանդի, որուն ստէպէ կը հանդիպիմք ՚ի յոյն քերթողս, որուն այսպիսի բացատրութիւններ կու տայ մեր խորին քերթողն. Անարօր արգանդ, անհանդերձնի երկիր որու-

փայելին սևենիի, ու միշտ այս այլաբանութիւնն գեղեցիկ կերպերով կը յեղյեղէ իր Ողբերգութեան ու այլ ձառից մէջ, բարձրագոյն ողբերգակաց մէջ կը տեսանես յաւանակ և երինջ (ուժուու և մօծչօչ) կոյս օրիորդաց կամ մանկսոնց համար գործածուած. այսպէս Եւրիպիդէս, Եսրիլէս. նոյն բանը որչափ գեղեցիցի հանճարով յարմարցնէ Նարեկացին կամ 'ի յոյն քերդողաց տեղեկացած կամ յիւրմէտ ստեղծաբարաննեալ, սրբյալուսին յանսրբութ պրացուցեալ զայն, « Իբրեւ զէսանդարտ երինջ անսրբատ արարշանանք լծոյն մատուցար, և իրը յաւանակ կամաց անբաւին աստուածութեանն հետեւեցար »: Ասնկ հարկ համարեցանք ըսելու՝ որպէս զի իմացընն մք որ մեր լեզուն ամենայն ձեւոց կրնայ ճկիլ, կրնայ զանազան հագուստաներ զգենուլ, միայն թէ ճարտարապետ ձեռաց հանդիպի: — Իրաւ չեմք կրնար մենք մեր նախնեաց դատաւոր նստիլ, որ ցայսօր հազիւ թէ իրենց գրուածները կարգավով կը ջանամք քիլ կամ շատ աննոց գոյնը տառուլ, սակայն չեմք ալ համարիր թէ մաեն ձեռագրանք քրէս գըրութեանցը հարկ է հպատակիլ. վասն զի այդ օրինակողքն և ոչ մեր ունենած միջոցներն ունեցեր են բացատելու ու մտադիր կերպով օրինակիւու, որոնց պակսութեանը շատ սխալներ սպրդեր են. այլ պատշաճ կը կարծեմք՝ որ ինչ սխալմունքներ որ վերը յիշատակեցինք կրնան վայելչապէտ ուղղակի, միայն ըստ տեղւոյն ծանօթութեամիշք ալ իմացնել, ինչպէս ըրած եմք շատ գրոց:

Կետ մեսուպեան պարագայն շանցած:

Թարգմանիչներէն մէկն ՚ի Ս. Քաղաքն Երրուազէ, մթարգմանեց Ս. Աթանասի գրած:

Ս. Անտոնի վարուց պատմութիւնը, որուն

ոնոյն գեղեցկութիւնը արդէն ծանօթ՝ տըպագրած ըլլայով ՚ի սկիբրն Հարանց վարուց, որով ոչ որ տարակուսի հնութեանը վրայ: Շատ ուրիշ գրիչք ալ ծաղկած պիետի ըլլան անտարակոյս այս ժամանակիս մէջ, բայց որովհետեւ մեղ ծանօթ յիշատակարան մը չունիմք ձեռքբերնն, անոր համար քանի մը ուրիշ խորցրածութիւններ ալ ընելով մէկ քանի գրեանց վրայ՝ կնքեմք այս շրջանին վրայ ըրած փոքր տեսութիւննիս:

Կարծեմք թէ նաև Ս. Եփրեմայ Խորին Ասորւց ճառքն թարգմանուած ըլլան այն ժամանակին մէջ, բայց հիմակուան ունեցած ասորի բնագիրն չէ հայ թարգմանութեան օրինակն. այլ թերեւս մեր ճարտար գրիչն յոգներով ասորւայն երկարաբանութիւններ ուղեր կ'քաղելով յօրինել աւելի համառոտափառ ոճով այն օրինակին:

Կազ ուրիշ թարգմանութիւն մ'ալ նմանապէս յասորուցն եղած, ինչպէս կը ցուցըննեն չէ միայն պատմութիւնն, այլ նաև նոյն թարգմանութեան խօսից կերպերն, անուանց թաւ ասորական հնչուունքն ։ և է այս Ս. Յակորայ Մծրնայ կոչաւոր եպիսկոպոսին Զգօն կոչուած զիրքն, որոր արևելք կը ճանչնար Սրբոյն տառու երկասրութիւն, ինչպէս վկայէ իրեն վարուց պանչելի գրին. և Եւթաղ Եսթերայ գրոց յառաջարանութեան մէջ անկէ օրինակ մէջ կը բերէ. իսկ ՚ի մերոց ոչ ոք տարակուսեր էր, և ՚ի նախնեաց ամենքն վկայած են թէ սուրբ ճգնաւորն և եպիսկոպոսն գրած էր «Ճառո օգտակարս և աշխարհակեցցոյս»: Դարձեան նոյն սրբոյն վարուց պատմիչն կ'սսէ թէ մերս Ս. Յիհոսակէս (Յիհոսնէս) խնդրած ըլլայ ՚ի Ս. Յակորայ իր այս Զգօն կոչուած գիրքն. «Ազդ եղև սքանչելիին (Յակորայ) առ սուրբն Յիհոսակէս հարազատ իւր. բազում պաղատանս արձակէր վասն աշխարհին Ռժանունեաց, լուծանել ՚ի կապանացն, և զգիրն տալ զինուրբելին, որոր ինքնախօս արտեալ Զգօն կոչեցնեալ: » Այսուհետով վկայիւք հաստատապէս գիտեմ որ Ս. Յակոր Մծրնայ շարագրած է Զգօն կոչուած զիրքըն. որոց գլուխքն են՝ Հաւասար, Սէր, Պահք, Սզօթք, Պատերազմ, Ուխտաւորք, Ապաշխարութիւն, Յարութիւն, Խոնարհութիւն, Հովիւք, Վասն թիփատութեան ընդգեմշրէից, Վասն Շաբաթու ընդդէմշրէից, Յիհոսակ ցուցանելի վասն ընտրութեան կերպարոց, Վասն Զատկաց, Վասն հեթանոսացն մտանելոյ փոխանակ ծովովքեանն Հրէից, Քրիստոս որդի Աստուծոյ է, կուսութիւն և սրբութիւն, Յանցիմնաւթիւնն ընդդէմշրէից զի ասեն թէ կայ մեղ ժողովել. (Արտաքոյ գրոցն կարգեալ Զգօնայ, այլ թուղթ նորա). այս վերջի թուղթն գըրուած է ընդդէմշրէ հակառակասէր և խոռոշութիւն:

1 Ասորի թաւ հնչուութ ըստներն երեկոն նաև ՚ի թարգմանութեան Ս. Ներեմայ կը պատահինք, բայց Զգօն գրոց մէջ յաշնաբագյն ևս յորդէն. այսպէս օրինակ իմն Յահովանան Եւու որդի Ամեսսեայ, Յափատեանց — Ուրդի Սափատանց — Անարա — Աքասար. Ապշեայ ամենքն Ասմենէս ամիկին, Ֆասար — Մանգովը. Խողոգէ — Ողգան (ինն մարգարէ). Անակը կին Ուրարայ — Յայել կին Քարերայ. Խոծար — Ասոփ. Անզա և Անհիրայ — Ուզա և Ուզիրա. Ամէտ — Եթթիք, իսկ Աստուծոյ անունն այսպէս կուռէ ասորերէն՝ «Անիան շանարան Էլլաշտէ և առօնէ հրաւութ».

Եկոմ — Ալբոմ. Շաւուզ — Աւաւուզ. Հեմ — Սեմ. Հոշիս կամ Հոշա կամ Խոշա — Ովսէէ (մարգարէ):

վայոց եպիսկոպոսի մը՝ որ կը նստէր ՚ի Սղակ կամ ՚ի Տիղրն (կամ ՚ի Սեւեկիան Տիպոն, վասն զի Պարսից մայրսորազոքն երկու անուամբք ալ կոչուէր): Բայց մեր օրերն գտնուեցաւ ասորի օրինակ մը գրոցը, յորում կայ աւելի քան զմեր հայ օրինակն չորս ճառ, որբ են. վասն դարմանելոյ գտարոյ, վասն հայածանոց, վասն մահու և հանդիրեան կենաց, ՚ի բան Եղայա (Կ, 8) «Եթէ գտանիցի ծիռ ՚ի մէջ ողիուզոց»: Խակ գրոց խորպագին Է՝ «Ճառք Տեառն Յակորայ իմաստնոյ Պարսիի, որ է Ափրահատ կամ Ֆրաստ»: ասիէ Համարեցան թէ ուրիշ Յակոր անուամբ մէկն պիտի ըլլայ, ու ժամանակ անցնելով մերոյս Յակորայ հետ շփոթուած: Բայց որովհետեւ գեռաւական լուսաւորեալ չէ այս խնդիրն, մենք այսչափ բաւական կը Համարիմք այս գրոց վրայ երկարելն. միայն այս ալ յիշցնելք որ մեր իմաստնոյ Փաւաստու պատումին ալ կ'սսէ Ս. Յակորայ Համար: թէ «փոխանակ ազգաւն պարսիկ կոչէր»: Թող բանասէրք քննեն այս տարակուսական խնդիրն:

Այս շրջան կներելու կան ուրիշ երկու գրոց վրայ ալ խորհրդածութիւնք, մէկն է Ագաթանգեղոս և միւսն Բիւզանդարանն Փաւաստոփ, երկուքն ալ շատ անգամ լինելոր նիւթ եղած, Բիւզանդայ երկրայութեան պատճանառ արգէն Լազար Փարագեցին երկարագոյն կը յիշատակէ, առանց ըսելու թէ ինչ լեզուով գրեծ է մինք այս պատմութիւնն: Եթէ ազգային Հայ ըշնդունինք ապա և հայ լեզուով գրելն կրնամք մերեծել, այլ թէ յոյն լեզուաւ շարագրած ըլլայ, և ուրիշ մը յետոյ ՚ի Հայ գարձուցած: Վասն զի համարելով թէ յառաջ քան զինդերորդ գարն գրած ըլլայ, զանազան առարկութիւններ ընդ առաջ կ'ելլին, թէ ուրեմն ինչ տարիւք գրաշնծ ըլլայ այս իւր գիրըք. բայց կննամք կարծիք որ կննամք իրորդ գարէն առաջ գրած ըլլալով յոյն մտանեած գրէ մը, ետքը թարգմանչաց ժամանակ ՚ի Հայ լեզու փոխարդուած ըլլայ:

Այսպիսի կարծեաց ընդունակ կրնայ ըլլալ նաև ՚ի ամիթի Անյազթի գրուածքն, որուն յոյն օրինակ մ'ալ համաձայն հայկականին գտնուելով՝ տարակոյս կը ծագէ թէ թերեւս և ինքն ՚ի յոյն լեզու շարագրած ըլլայ ու այլ ոք թարգմանած նշիւ հելենաւարանութեամբ:

Խակ Բիւզանդեան մատենագրութիւնը ինչպէս որ ալ համարիմք, քիչ մը Կորեան շարագրութեանը կը մերձնայ. և եթէ ուսով զիտեմ՝ կարծես որ իրարմէ օրինա-

կուտօծ է տեղ տեղ, բայց չգիտցուիր մըը որմէ:

Մէք կարծեմք որ կորիւն մը Ա. Մեսրոպոս և Սահակայ աշակերտանալ չէր երթար մոռ բացածոյ գողոթիւն մ' ընել օտարազգի հայկաբանէ մը, թէ ախորժես այսակէս կոչել զՓաւատոս, բայց յօժարութեամբ հաւանիմք ըսելու թէ իր աշակերտակցի մը թէ ոչ իր բնիկ թարգմանութենէն փոխառութիւն ըրած ըլլայ նմանելով երկրորդ՝ որ այդափառ հայամերժ ոգի մը իրը զՓաւատոսին և ոչ իսկ յանձն կ'առնոցը իր չսիրած ազգին լեզուն զիրք շարագրել թող թէ այդպիսի հայկաբանութիւն մը հարաւոր կարծել օտարազգույ մը:

Իսկ հման գարով յստակիսոս գրչին Արգաթանգեղեայ Պատամագրութեանը, Փաւատոսին գրոց նուան եղած համարիմք, և ոչ թէ Տրդատայ աջող քարտուղարն Հռովմացիցին Ազգաթանգեղոսս այնախիս ոճով հայկաբան կարծեմք. իսկ միջի նշմարուած սիստմներուն մեկնութիւնը մենք այսպէս կուտամք. Ազգաթանգեղոս հմուտ է լստիխական և յունական պատմութեան, բայց նոյնակէս քաջ չէր կրնար ըլլալ և հայկականին, ասոր համար ինչ որ հնչմարդ լսեր անանի նշանագրեր է. Դարձեալ թէ որ հայ լեզուն գիտեր ինչո՞ւ ի՞ Յատաջարանին իր զիտութեանց կարգը չէ անցուցած, երբ կ'ըսէ. «Արդ հրաման հասեալ առ իս ոմն Ազգաթանգեղոս որ ի՞ քաղաքէ ի՞ մեծն Հռովմայ, և վարժեալ հայրէնի արուեստիւ հոռոմարէն և յունարէն ուսեալ զպրութիւն, և ոչ ինչ կարի անտեղեակ լեալ ձեռնարկութեան նշանագրաց»: Արդ ինչո՞ւ ամենէն կարենոր չի յիշեր. վասն զի յոյն ու լստին սովորական լեզուով էին արքունեաց, ու եթէ նոր բան մը սորված էր պիտի ըլլար հայերէնը, որուն ընաւ յիշատակութիւն մը չըներ. Զայն ալ չեմք մերժեր որ արդի յոյնն ի՞ մեր հայերէնէն թարգմանուած ըլլայ յետ ժամանակաց, բայց մեր ունեցած հայերէնն ալ նախին յունարէնէ մը նոխացած կամ թարգմանած է:

Բայց ասոնք սոսկ խօսքեր կամ կարծիք կ'ըլլային եթէ չունենայինք նոր յենարան մ' այս կարծեացու, ու այս կը կայանայ յիշատակաբանի մը վրայ: Ազգաթանգեղեայ Փարիզեան ձեռագրի մը ետեւ այս վերնա-

գրով կը գտնեմ փոքր յիշատակ մը. «Եղանակիր կարգաց բանից, թէ ուստի էին կամ մրայէս զիարդ յանդրութիւնք թագաւորացն Տրդատայ, և քահանայապետափցն ՚ի սրբոյն Գրիգորէ որ կացին մինչեւ առ մեզ վարումն փոքր ՚ի շատէ գրոշմեալ վասն գիտութեան ՚ի վերայ հասանելոց»: «Գիշմը յառաջն վարելով այս գրութիւնն կը հասցնէ մինչև ցատրին Սահակ և Մեսրովլի, և կը յաւելու. «Եւ նոցուն աշակերտ Ղևոնդ այր սուրբ և ընտրեալ և ճշմարիտ ՚ի գործ մշակութեան Աստուծոյ, և Արքան և կորիւն և Եղնիկ, և արրանեակը նոցուն լուսաւոր հանդիսիցն, և ձեռնադրեալը ՚ի նոյն սրբոյ կաթողիկոս»: «Եւ յետ պատմելու համարօստարար թէ Ա. Սահակայ ժամանակ ըլլալով և Հանոււնն և նորոգումն ուկերացն սրբոց Գայինանեայ և Հոփիփիմեայ և ընկերացն նոցին ՚ի Սահակայ կաթողիկոսէ, զի եղածովն Գրիգորի կային նորա, և թէ Սահակ պատրաստեաց անոնց սրբազնն ոսկերացն շիրիմ և հանգրատարան», ՚ի վերջին տողին կ'ըսէ. «Եղիշեյ յիշատակ Եզնակն ՚ի թարգմանել զդիրս զայս և բայց որովհետեւ նոյն սեղն կ'ըլլայ նաև յիշատակութիւն Կոմիտասայ կաթողիկոսին, որ ինքն ալ իր ժամանակը նորոգեց Հոփիփիմեանց և Գայինանեանց վկայարանիը, կարծեցին ունան թէ այս թարգմանիշն ըլլայ յեօթներորդ գարութղնիկ Երեց մը, որուն գոյութիւնը միայն այս ձեռագրին վրայ հաստատեալ կ'ըլլայ: Այլ լաւ ևս կարծուի թէ բուն իսկ վերոյիշեալ անձանց մէջ (Արքանայ և Կորեան և Եզնըկայ) վերջին Եզնիկն համարուի կողմացին, գրաւոր վաստակովն մանօթ յանդիքս և ՚ի մատենագրութեան. իսկ կոմիտասայ կաթողիկոսին պատմութիւնն յիշուուրիչ գրչէ յաւելեալ, ՚ի լուսն պատմութեան նշխարաց սրբոց Հոփիփիմեանց: Նոյն կարծիքը հաստատէ նաև շարագրութեան զորիկութիւնն ու բարձրութիւնը:

Որչափ ալ ցանկալի էր մեղ երկայնել այս ոսկեղինիկ գարուս գրաւոր երկասիրութեանց վրայ, սակայն ծանօթութեանց պակասութեամբն և չուզելով նոյն ու նման բաներ յելլյեղել, այսչափս բաւական կը սեպեմք սոյն պարագայիս համար: